

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ԵՐԵՎԱՆԵՐԻՆ ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ  
ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 20.11.2014

Գլխիկ I. ԸՆՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գլխիկ II. ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ, ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ԵՎ

ՀԱՐԱԿԻՑ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՂՈՐՏՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Գլխիկ III. ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ, ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ԵՎ

ՀԱՐԱԿԻՑ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՂՈՐՏՈՒՄ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ

ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԿԱՏՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Գլխիկ IV. ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄԸ

Գլխիկ V. ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Գլխիկ VI. ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿՆԵՐԻՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Գլխիկ VII. ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՈՂՈՐՏՈՒՄ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գլխիկ VIII. ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԿՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ

ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

Գլխիկ IX. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Գլխիկ X. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

\_ Գլխիկ I

ԸՆՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքով կարգավորվում են երեխաներին կրճիով կերակրման խրախուսման,

մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության՝ արտադրության, պիտակավորման, վաճառքի, բաշխման, գովազդի, ինչպէս նաեւ դրանց մասին իրազեկման եւ տեղեկությունների տարածման հետ կապված հարաբերությունները:

**Հոդված 2. Օրենքի նպատակը**

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել մանուկների եւ վաղ տարիքի երեխաների առողջ եւ անվտանգ սնուցումը կրճճով կերակրման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության կարգավորման միջոցով:

**Հոդված 3. Օրենքի խնդիրները**

1. Սույն օրենքի խնդիրներն են՝

1) խրախուսել եւ պաշտպանել կրճճով կերակրումը՝ որպէս օպտիմալ եւ ալլընտրանք չունեցող միջոց մանուկների եւ վաղ տարիքի երեխաների անվտանգ եւ համապատասխան (համարժեք) սնուցումն ապահովելու համար.

2) խրախուսել ժամանակին եւ համապատասխան հավելյալ սնուցման ապահովումը.

3) իրազեկել հանրությանը, ներառյալ՝ հղիներին, նրանց ընտանիքներին եւ երեխաներին խնամողներին, կրճճով կերակրման առավելությունների, կրճճի կաթի փոխարինիչների օգտագործման եւ ոչ ճիշտ օգտագործման հետ կապված՝ առողջությանը սպառնացող հնարավոր վտանգների եւ ռիսկերի վերաբերյալ՝ տրամադրելով համապատասխան, ճշգրիտ եւ հասանելի տեղեկատվություն.

4) խրախուսել ու աջակցել մայրերի, մանուկների եւ վաղ տարիքի երեխաների համար բարյացակամ միջավայրի ապահովումն առողջապահական կազմակերպություններում, հասարակական վայրերում եւ աշխատավայրերում.

5) միջազգային չափանիւշերին համապատասխանեցնել կրճճով կերակրման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության հետ կապված օրենսդրությունը.

6) խրախուսել եւ պաշտպանել կրճճով կերակրումը՝ որպէս ազգատության հաղթահարման արդյունավետ միջոց:

**Հոդված 4. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) կրճճով կերակրման խրախուսում՝ միջոցառումներ՝ ուղղված մանուկներին եւ վաղ տարիքի երեխաներին մայրական կաթով կերակրելուն.

- 2) մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառություն՝ մանկական սննդի եւ հարակից ապրանքների արտադրություն, պիտակավորում, վաճառք, բաշխում, գովազդ, ինչպէս նաեւ դրանց մասին իրազեկման եւ տեղեկությունների տարածում.
- 3) մանկական կաթնախառնուրդ՝ արդյունաբերական եղանակով մշակված, կենդանական կամ բուսական ծագում ունեցող կաթ կամ կրծքի կաթի փոխարինիչ, որը նախատեսված է մանուկների կերակրման համար՝ ծննդյան պահից մինչեւ 6 ամսական տարիքը.
- 4) վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդ՝ արդյունաբերական եղանակով մշակված, կենդանական կամ բուսական ծագում ունեցող կաթ կամ կրծքի կաթի փոխարինիչ, որը նախատեսված է 6 ամսականից բարձր տարիքի մանուկների եւ վաղ տարիքի երեխաների կերակրման համար.
- 5) հավելյալ սնունդ՝ 6 ամսականից բարձր մանուկների եւ վաղ տարիքի երեխաների սնունդ՝ նախատեսված ի հավելումն կրծքի կաթի կամ վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների օգտագործմանը.
- 6) լրացուցիչ սնունդ՝ բժշկական ցուցումներով կամ մայրական կաթի անբավարարության դեպքում մանուկների եւ վաղ տարիքի երեխաների համար նախատեսված կաթ կամ կրծքի կաթի փոխարինիչներ.
- 7) մանկական սնունդ՝ մանուկների եւ վաղ տարիքի երեխաների համար նախատեսված սնունդ, որը ներառում է մանկական կաթնախառնուրդը, վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդը եւ հավելյալ սնունդը.
- 8) հարակից ապրանքներ՝ մանկական սնունդը սպառողին հասցնելու եւ (կամ) երեխային կերակրելու համար նախատեսված միջոցներ եւ պարագաներ, այդ թվում՝ կերակրման շեքեր եւ երեխաներին կերակրելու կամ հանգստացնելու նպատակով օգտագործվող արհեստական ծծակներ.
- 9) մանուկ՝ մինչեւ 12 ամսական երեխա.
- 10) վաղ տարիքի երեխա՝ 12 ամսականից մինչեւ 3 տարեկան (36 ամսական) երեխա.
- 11) արտադրող՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն զբաղվում է մանկական սննդի եւ հարակից ապրանքների արտադրությամբ.
- 12) բաշխող՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն զբաղվում է մանկական սննդի եւ հարակից ապրանքների մեծածախ եւ (կամ) մանրածախ վաճառքով եւ դրանց սպառման խրախուսմամբ.

13) մանկական սննդի եւ հարակից ապրանքների խրախուսում՝ մանկական սննդի եւ հարակից ապրանքների սպառման ուղղակի կամ անուղղակի նպատակաուղղված գործունեություն.

14) մանկական սննդի եւ հարակից ապրանքների նմուշ՝ խրախուսման նպատակով մանկական սննդի եւ հարակից ապրանքների անվճար տրամադրվող մեկ միավոր կամ փոքր քանակություն.

15) մանկական սննդի եւ հարակից ապրանքների պիտակ՝ նշագրում, նշան, պատկերավոր կամ այլ նկարագրական նյութ՝ գրված, տպված, գարդանախօսված, տրաֆարետով ներկված, դրոշմված, ֆանդակադրոշմված, որը փակցված է կամ այլ ձևով հանդես է գալիս մանկական սննդի եւ հարակից ապրանքների վրա.

16) նորածիններին բարյացակամ ծառայություններ՝ առողջապահական կազմակերպություններում հղի կանանց, մայրերի եւ մանուկների խնամփն, զարգացմանը եւ կրճճով կերակրմանը նպաստելուն ուղղված միջոցառումներ.

17) առողջապահական կազմակերպություն՝ առողջապահական բնագավառում գործունեություն իրականացնող կազմակերպություն:

## Գլուխ II

ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ, ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ԵՎ ՀԱՐԱԿԻԳ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՂՈՐՏՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 5. Կրճճով կերակրման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության ուղարտում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասությունները

1. Կրճճով կերակրման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության ուղարտում Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասություններն են՝

1) մանուկներին եւ վաղ տարիքի երեխաներին անվտանգ եւ համապատասխան (համաթեֆ) սնուցում ապահովելու նպատակով կրճճով կերակրման խրախուսման ազգային ծրագրի հաստատումը.

2) կրճճով կերակրման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության ուղարտում միջգերատեսչական համագործակցության ապահովումը.

3) մանկական եւ վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդներից նմուշ վերցնելու,

վորձաճննություն անցկացնելու եւ կաթնախառնուրդների գրանցման կարգի սահմանումը.

4) սույն ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարման համար միջոցների ձեռնարկումը:

**Հոդված 6.** Կրճճով կերակրման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների Երջանառության ոլորտում լիազոր մարմնի իրավասությունները

1. Կրճճով կերակրման խրախուսման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) իրավասություններն են՝

1) կրճճով կերակրման խրախուսման ոլորտում օրենքով իրեն վերապահված լիազորությունների Երջանակներում օրենսդրության կատարման նկատմամբ վերահսկողությունը եւ մշտադիտարկումը.

2) կրճճով կերակրման խրախուսման ոլորտում օրենքով իրեն վերապահված լիազորությունների Երջանակներում պատասխանատվության կիրառումը.

3) մանկական եւ վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցումը:

2. Մանկական սննդի եւ հարակից ապրանքների Երջանառության ոլորտում լիազոր մարմնի իրավասություններն են՝

1) մանկական սննդի եւ հարակից ապրանքների Երջանառության ոլորտում պետական քաղաքականության մշակումը եւ իրականացումը.

2) մանկական սննդի եւ հարակից ապրանքների Երջանառության ոլորտում օրենքով իրեն վերապահված լիազորությունների Երջանակներում օրենսդրության կատարման նկատմամբ վերահսկողությունը եւ մշտադիտարկումը.

3) սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ մանկական սննդի եւ հարակից ապրանքների Երջանառության հետ կապված, նորմատիվ իրավական ակտերի ընդունումը.

4) մանկական սննդի եւ հարակից ապրանքների Երջանառության ոլորտում օրենքով իրեն վերապահված լիազորությունների Երջանակներում պատասխանատվության կիրառումը:

### ԳԼՈՒԽ III

ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՄՄԱՆ, ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ

**ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՂՈՐՏՈՒՄ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

Հոդված 7. Կրժֆով կերակրման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության ուղարտում օրենսդրության կատարման նկատմամբ պետական վերահսկողությունը

1. Կրժֆով կերակրման խրախուսման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների շրջանառության ուղարտում օրենսդրության կատարման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում են լիազոր մարմինները՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

**Գլուխ IV**

**ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄԸ**

Հոդված 8. Կրժֆով կերակրման խրախուսման ազգային ծրագիրը

1. Կրժֆով կերակրման խրախուսման ազգային ծրագրով սահմանվում են՝

- 1) կրժֆով կերակրման ճարտարապետական ուղղված միջոցառումները.
- 2) կրժֆով կերակրման տեղեկատվության հավաքումը եւ վերլուծությունը.
- 3) կրժֆով կերակրման խրախուսման վերաբերյալ բուժաշխատողների կրթելուն ուղղված միջոցառումները.
- 4) առողջապահական կազմակերպություններում նորածիններին բարյացակամ ծառայությունների տրամադրումը.
- 5) կերակրող մայրերի եւ նրանց երեխաների համար նախատեսված նպաստավոր պայմանների ստեղծումը.
- 6) հանրային իրազեկվածության բարձրացումը, ներառյալ՝ հղիների եւ նրանց ընտանիքների.
- 7) միջգերատեսչական համագործակցությունը:

Հոդված 9. Կրժֆով կերակրվող երեխայի իրավունքը

1. Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի՝

- 1) ստանալու կրժֆով կերակրում՝ որպես օպտիմալ եւ այլընտրանք չունեցող միջոց անվտանգ եւ համապատասխան (համարժեք) սնուցում ստանալու համար.
- 2) գերծ մնալու կրժֆով կերակրումից՝ բժշկական հակացուցումների առկայության

դեպքում, որոնց ցանկը հաստատում է առողջապահության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինը.

3) ֆիզիոլոգիական պահանջներից էլնելով՝ 6 ամսականից ստանալու հավելյալ սնունդ, իսկ բժշկական ցուցումներով՝ լրացուցիչ սնունդ: Հավելյալ եւ լրացուցիչ սնունդ ստանալու մեթոդական ուղեցույցները հաստատում է լիազոր մարմինը:

2. Պետությունը միջոցներ է ձեռնարկում կրճով կերակրումը խրախուսելու, կրճով կերակրող կանանց եւ երեխաների իրավունքները պաշտպանելու համար:

Հոդված 10. Կրճով կերակրող կանանց իրավունքները

1. Կրճով կերակրող կինն իրավունք ունի՝

1) ունենալու համապատասխան պայմաններ աշխատավայրերում, ֆրեակատարողական հիմնարկներում, առողջապահական կազմակերպություններում եւ այլ հասարակական վայրերում կրճով կերակրելու համար.

2) ստանալու տեղեկատվություն կրճով կերակրման առավելությունների, ինչպես նաեւ մանուկների եւ վաղ տարիքի երեխաների առողջ եւ անվտանգ սնուցման վերաբերյալ.

3) ստանալու կրճով կերակրման ապահովման հետ կապված անվճար բժշկական խորհրդատվություն:

## Գլուխ V

### ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՆՂԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 11. Մանկական սննդի եւ հարակից ապրանքների վաճառքը

1. Արգելվում է՝

1) առողջապահական կազմակերպությունների կողմից մանկական սննդի եւ հարակից ապրանքների վաճառքը.

2) համապատասխանության գնահատում չանցած կամ պիտանելիության ժամկետանց մանկական սննդի եւ հարակից ապրանքների վաճառքը.

3) մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող սննդամթերքը վաճառել կամ ներկայացնել որպես պիտանի 6 ամսականից փոքր մանուկների կերակրման համար.

4) մանկական սննդի եւ հարակից ապրանքների վաճառքը՝ լիազոր մարմնի սահմանած պահպանման համապատասխան պայմաններ չունեցող առևտրի օբյեկտի, սպառողական ապրանքների շուկայի, շրջիկ առևտրի կետի եւ (կամ) առևտրի կենտրոնի կողմից:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների խախտումն առաջացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն:

Հոդված 12. Մանկական սննդի եւ հարակից ապրանքների գովազդը եւ խրախուսումը

1. Մանկական եւ վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների, մինչեւ 6 ամսական մանուկների համար մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող ցանկացած սննդամթերքի եւ հարակից ապրանքների գովազդը եւ (կամ) խրախուսման այլ ձեւերն արգելվում են:

2. Խրախուսման արգելված այլ ձեւերն ընդգրկում են՝

1) հատուկ ցուցահանդես-վաճառքները, շոփերի հանդեսները, շահումները, պարգևների, մրցանակների, նվերների շոփերում, զեղչի կտրոնների կիրառումը, ինչպես նաև զեղչային կամ որևէ այլ խրախուսական նպատակներ հետապնդող գնային ֆաղափականության վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը, ցուցադրումը, տարածումը կամ այլ ձեւով հրապարակայնորեն հասանելի դարձնելը.

2) մանկական սննդի եւ հարակից ապրանքների նմուշների տրամադրումը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

3. Հավելյալ սննդի գովազդը թույլատրվում է միայն այն դեպքերում, եթե՝

1) չի գովազդվում առողջապահական կազմակերպություններում.

2) հավելյալ սննդի մասին տրամադրվող ցանկացած տեղեկություն խրախուսում է բացառապես կրճով կերակրումը կյանքի առաջին 6 ամիսների ընթացքում եւ շարունակական կրճով կերակրումը մինչեւ երկու տարեկան հասակը:

Հոդված 13. Արտադրողների եւ բաշխողների կողմից խրախուսումն արգելելը

1. Մանկական սննդի եւ հարակից ապրանքների խրախուսումն արտադրողների եւ (կամ) բաշխողների կողմից արգելվում է:

2. Արտադրողի եւ (կամ) բաշխողի կողմից արգելվում են խրախուսման հետեւյալ եղանակները.

1) բուժաբանականներին կամ առողջապահական կազմակերպություններին մանկական սնունդ եւ հարակից ապրանքներ նվիրելը կամ դրանք տրամադրելը հայտարարված մեծածախ գնից կամ մեծածախ գնի բացակայության դեպքում՝ մանրածախ գնի ութսուն տոկոսից ցածր գնով, բացառությամբ սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթների.



2) մանկական սննդի եւ հարակից ապրանքների օգտագործումը խրախուսելու նպատակով առողջապահական կազմակերպությանն անվնար սարքավորումներ, պարագաներ տրամադրելը կամ ծառայություններ մատուցելը.

3) բուժաշխատողներին եւ առողջապահական կազմակերպություններին նվերներ, այդ թվում՝ գրիչներ, օրացույցներ, պաստառներ, հուշատետրեր, նոթատետրեր, հասակաչափեր, մանկան անի կամ զարգացման գրաֆիկներ, խաղալիքներ տրամադրելը.

4) բուժաշխատողներին կամ բուժաշխատողների շահերը ներկայացնող հասարակական կազմակերպություններին կամ արհեստակցական միություններին դրամական հատկացումներ տրամադրելը կամ առաջարկելը (նվիրատվություններ, հոնորարներ՝ մատուցված ծառայությունների համար, գիտահետազոտական աշխատանքների անցկացման համար՝ հատուցումներ, հետազոտական դրամաշնորհներ կամ հանդիպումների, սեմինարների, շարունակական ուսուցողական դասընթացների կամ գիտաժողովների հետ կապված դրամային հատկացումներ եւ այլն).

5) հղի կանանց կամ կերակրող մայրերի, մանուկների եւ վաղ տարիքի երեխաների ծնողների կամ նրանց ընտանիքների անդամների համար ծնելիության, հղիության, երեխայի ծննդի եւ սնուցման հետ առնչվող իրադարձություններ, միջոցառումներ, մրցույթներ, խորհրդատվական հեռախոսագծերի գործունեություն կամ արժավներ հովանավորելը.

6) մանուկների եւ վաղ տարիքի երեխաների սնուցման հետ առնչվող տեղեկատվական կամ ուսուցողական նյութերի տրամադրումը, տարածումը, ուսուցողական գործունեության ծավալումը, բացառությամբ լիազոր մարմնի հետ համաձայնեցված, մանկական սննդի եւ հարակից ապրանքների հատկանիշների գիտական ասպեկտներին կամ օգտագործման եղանակներին վերաբերող տեղեկատվության տրամադրման:

**Հոդված 14. Բուժաշխատողների կողմից մանկական սննդի վաճառքը եւ խրախուսումն արգելելը**

1. Մոր եւ մանկան առողջության պահպանման ոլորտում ընդգրկված բուժաշխատողներին արգելվում է՝

1) մանկական սննդի եւ հարակից ապրանքների վաճառքով, իրացման, գովազդի կամ խրախուսման այլ ձեւերով զբաղվելը.

2) արտադրողից եւ (կամ) բաշխողից կամ նրանց անունից հանդես եկող այլ

կազմակերպությունից որեւէ նվեր, շնորհ կամ պարգև դրամական կամ որեւէ այլ տեսքով ընդունելը.

3) մանկական սննդի եւ հարակից ապրանքների նմուշներ ընդունելը կամ տրամադրելը.

4) մանկական սննդի օգտագործման ցուցադրումը, բացառությամբ այն դեպքերի, երբ մանկական կաթնախառնուրդով կերակրելն անհրաժեշտ է՝ ելնելով բժշկական ցուցումներից, կամ եթե մայրն ընտրել է մանկական սննդով կերակրումը:

**Հոդված 15. Մանկական սննդի եւ հարակից ապրանքների անվնար կամ ցածր զներով տրամադրումը**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մանկական սնունդը եւ հարակից ապրանքներն անվնար կամ ցածր զներով կարող են տրամադրվել՝

- 1) առանց ծնողական խնամփի մնացած երեխաներին.
- 2) բժշկական ցուցումներով հատուկ սնուցողական պահանջներ ունեցող երեխաներին.
- 3) մայրական կաթով կերակրման բժշկական հակացուցումների դեպքում:

## **Գլուխ VI**

### **ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԻՏԱԿՆԵՐԻՆ**

#### **ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

**Հոդված 16. Մանկական սննդի պիտակներին ներկայացվող պահանջները**

1. Մանկական սննդի պիտակները հայերենով եւ ընթեռնելի տառաչափով պետք է պարունակեն հետևյալ տեղեկատվությունը.

- 1) պատրաստման եւ օգտագործման հրահանգներ՝ բառերով եւ պատկերներով.
- 2) երեխաների տարիքային խումբը՝ թվանշաններով, որոնց համար նախատեսված է մանկական սնունդը, ընդ որում՝ հավելյալ սնուցման համար նախատեսված դեպքերում նշված տարիքը չպետք է փոքր լինի **6** ամսականից.
- 3) նախագրուշացումն ոչ ճիշտ պատրաստման եւ այլ տարիքի երեխայի կերակրման հետ կապված՝ առողջությանը սպառնացող հնարավոր վտանգների եւ ռիսկերի մասին.
- 4) բաղադրությունը եւ կաթի կամ կրծքի կաթի փոխարինիչի ծագումը.
- 5) պահպանման պայմանները նախքան բացելը եւ դրանից հետո.
- 6) խմբաբանակի համարը, արտադրման ամսաթիվը եւ պիտանելիության ժամկետը.
- 7) արտադրողի եւ (կամ) բաշխողի անվանումը, գտնվելու վայրը եւ կապի միջոցները.
- 8) մանկական եւ վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների պիտակները պետք է

պարունակեն լիազոր մարմնի սահմանած ոչ ճիշտ օգտագործման վերաբերյալ նախագգուշացման տեխստ.

9) վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների պիտակները պետք է պարունակեն նախագգուշացում այն մասին, որ կաթնախառնուրդը չպետք է օգտագործվի 6 ամսականից փոքր մանուկների համար.

10) մանկական եւ վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների պիտակները պետք է պարունակեն «ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ» բառերը եւ ստորեւ հետեւյալ տեխստը մեծատառերով. «ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ ԼԱՎԱԳՈՒՅՆ Է: ԿՐԾՔԻ ԿԱԹԸ ԿԱՏԱՐՅԱԼ ՍՆՈՒՆԴ Է ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՌՈՂՁ ԱՃԻ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ: ԱՅՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ՓՈՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԱՅԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ»: Նշումը պետք է գրադեցնի պիտակի ծավալի ոչ պակաս, քան քան տակաւը:

## 2. Արգելվում է՝

1) մանկական եւ վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների պիտակների վրա տեղադրել կրծքով կերակրումը նսեմացնող կամ արհեստական սնուցումը գովաբանող բովանդակությամբ որեւէ տեխստ.

2) մանկական եւ վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների պիտակների վրա տեղադրել "մայրականացված", "մարդկայնացված" կամ կրծքի կաթի հետ որեւէ համեմատություն ենթադրող արտահայտություններ.

3) մանկական սննդի պիտակների վրա տեղադրել երեխայի նկարներ.

4) մանկական սննդի պիտակների վրա տեղադրել դրանց պատրաստման եղանակների լուսաբանման հետ առնչություն չունեցող լուսանկարներ, նկարներ կամ այլ գրաֆիկական պատկերներ.

5) մանկական սննդի պիտակների վրա տեղադրել ցանկացած գրառում, որը հավաստիացնում կամ հնարավոր է համարում կապը տվյալ արտադրանքի կամ նրա բաղադրիչ մասերի եւ առողջության, աւնի կամ գարգացման միջեւ.

6) մանկական կաթնախառնուրդ չհանդիսացող սննդամթերքի պիտակների արտաքին տեսքի եւ (կամ) ձեւավորման նմանեցումը մանկական կաթնախառնուրդների պիտակներին.

7) սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող պիտակավորմամբ մանկական

սննդի վաճառքը կամ այլ կերպ իրացումը:

3. Սույն օրենքի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է մանկական սննդի պիտակներին ներկայացվող լրացուցիչ պահանջներ:

Հոդված 17. Հարակից ապրանքների պիտակներին ներկայացվող պահանջները

1. Հարակից ապրանքների պիտակները հայերենով եւ ընթերցելի տառաչափով պետք է պարունակեն հետևյալ տեղեկատվությունը.

1) «ԿԱՐԵՎՈՐ ՆՇՈՒՄ» բառերը եւ ստորեւ հետևյալ տեքստը մեծատառերով.  
«ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ ԼՍՎԱԳՈՒՅՆ Է: ԿՐԾՔԻ ԿԱԹԸ ԿԱՏԱՐՅԱԼ ՄՆՈՒՆԴ Է ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՌՈՂՋ ԱՃԻ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ: ԱՅՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ՓՈՐՆՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՎ ԱՅԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ»: Նշումը պետք է գրադեցնի պիտակի ծավալի ոչ պակաս, քան քսան տոկոսը.

2) ոչ ճիշտ օգտագործման վերաբերյալ լիազոր մարմնի սահմանած նախազգուշացման տեքստ.

3) լվացման եւ ախտահանման հրահանգներ՝ բառերով եւ պատկերներով.

4) արտադրողի եւ բաշխողի անվանումը, գտնվելու վայրը եւ կապի միջոցները:

2. Սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող պիտակավորմամբ հարակից ապրանքների վաճառքը կամ այլ կերպ իրացումն արգելվում է:

3. Սույն օրենքի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է հարակից ապրանքների պիտակներին ներկայացվող լրացուցիչ պահանջներ:

## ԳԼՈՒԽ VII

ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԿՈՒՄՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 18. Առողջապահական կազմակերպությունների պարտականությունները

1. Առողջապահական կազմակերպությունները կրճճով կերակրման համար պարտավոր են ապահովել բարյացակամ միջավայր, այդ թվում՝

1) խրախուսել ու աջակցել կրճճով կերակրումը՝ որպես օպտիմալ եւ այլընտրանք չունեցող միջոց մանուկների եւ վաղ տարիքի երեխաների անվտանգ եւ համապատասխան (համարժեք) սնուցում ապահովելու համար.

- 2) խրախուսել ժամանակին եւ համապատասխան հավելյալ սնուցման կազմակերպումը.
- 3) պահպանել սույն օրենքով եւ նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ կրճճով կերակրման կանոնները եւ նշված կանոնների վերաբերյալ պարբերաբար իրազեկել բժշկական անձնակազմին.
- 4) իրազեկել հանրությանը, ներառյալ՝ հղիներին, նրանց ընտանիքներին եւ երեխաներին խնամողներին, կրճճով կերակրման առավելությունների եւ գործնական հնարությունների, կրճճի կաթի փոխարինիչների օգտագործման եւ ոչ նիւտ օգտագործման հետ կապված՝ առողջությանը սպառնացող հնարավոր վտանգների եւ ռիսկերի վերաբերյալ՝ տրամադրելով համապատասխան, նշգրիտ եւ հասանելի տեղեկատվություն.
- 5) իրականացնել կրճճով կերակրման համար անհրաժեշտ գործնական հնարությունների դասընթաց բուժանձնակազմի համար.
- 6) մանկական սնունդ արտադրողներին եւ բաշխողներին չտրամադրել հղիների եւ կերակրող մայրերի կոնտակտային տվյալներ:

2. Մանկական սնունդ արտադրողների եւ (կամ) բաշխողների կողմից ցանկացած առաջարկի դեպքում (նմուշ, նվեր կամ այլ շնորհ) կամ սույն օրենքի նորմերի այլ խախտումների դեպքում առողջապահական կազմակերպությունները պարտավոր են տեղեկացնել լիազոր մարմնին:

#### Հոդված 19. Բուժաշխատողների պարտականությունները

1. Բուժաշխատողները պարտավոր են՝

- 1) հղիների, ծննդկանների եւ նրանց հարազատների հետ հանդիպումների ժամանակ խրախուսել կրճճով կերակրումը՝ որպէս օպտիմալ եւ այլընտրանք չունեցող միջոց՝ մանուկների եւ վաղ տարիքի երեխաների անվտանգ եւ համապատասխան (համարժեք) սնուցում ապահովելու համար.
- 2) ժամանակին գնահատել եւ խրախուսել համապատասխան հավելյալ սնուցման կազմակերպումը.
- 3) պահպանել սույն օրենքով եւ նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ կրճճով կերակրման կանոնները եւ նշված կանոնների մասին պարբերաբար իրազեկել կրճճով կերակրող մայրերին.
- 4) նորածիններին չտրամադրել ոչ մի տեսակի սնունդ կամ հեղուկ, բացի կրճճի կաթից, բացառությամբ սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված դեպքերի.

5) մանկական սնունդ արտադրողներին եւ (կամ) բաշխողներին չտրամադրել հղիների եւ կերակրող մայրերի կոնտակտային տվյալներ.

6) մանկական սնունդ արտադրողների եւ (կամ) բաշխողների կողմից ցանկացած առաջարկի դեպքում (նմուշ, նվեր կամ այլ շնորհ) կամ սույն օրենքի նորմերի այլ խախտումների դեպքում տեղեկացնել առողջապահական կազմակերպության դեկավարությանը.

7) բուժաշխատողները պարտավոր են մայրերին տրամադրել տեղեկատվություն մանկական սննդի օգտագործման հետ կապված՝ առողջությանը սպառնացող հնարավոր վտանգների եւ ռիսկերի վերաբերյալ:

### Գլուխ VIII

#### ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

Հոդված 20. Տեղեկատվական եւ ուսուցողական նյութերը մանկական սնուցման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների վերաբերյալ

1. Մանուկների եւ վաղ տարիքի երեխաների սնուցման վերաբերյալ գրավոր, ձայնային կամ տեսողական տեղեկատվական եւ ուսուցողական նյութերը պետք է՝

1) լինեն հայերենով, անհրաժեշտության դեպքում՝ նաեւ այլ լեզուներով.

2) պարունակեն ճշգրիտ եւ արդի տեղեկատվություն եւ բացառեն որեւէ նկար կամ տեքստ, որը խրախուսում է մանկական սննդի եւ հարակից ապրանքների օգտագործումը, շոշոկ կերակրումը կամ չի նպաստում կրճճով կերակրմանը.

3) հստակ ներկայացնեն հետեւյալ տեղեկատվությունը.

ա. կրճճով կերակրման անհրաժեշտությունն ու առավելությունները,

բ. 6 ամիս բացառապես եւ դրան հետեւող շարունակական (երկու տարի եւ ավելի) կրճճով կերակրման կարեւորությունը,

գ. ինչպես սկսել եւ պահպանել բացառապես եւ շարունակական կրճճով կերակրումը, ներառյալ, թե ինչու է դժվար փոխել կրճճով չկերակրելու որոշումը,

դ. 6 ամսականից սկսած՝ հավելյալ սննդի տրամադրման կարեւորությունը,

ե. շոշոկ կերակրման կամ հավելյալ սննդի վաղ տրամադրման բացասական ազդեցությունը կրճճով կերակրման վրա,

զ. տնային պայմաններում հավելյալ սննդի պատրաստումը:

2. Մանուկների եւ վաղ տարիքի երեխաների սնուցման վերաբերյալ գրավոր, ձայնային կամ տեսողական տեղեկատվական եւ ուսուցողական նյութերը չպետք է՝

1) ներկայացնեն, թե իբր մանկական սննդով կերակրելը կամ հարակից ապրանքներ օգտագործելը համարժեք է, համեմատելի է կամ գերազանցում է կրծքի կաթին կամ կրծքով կերակրմանը.

2) պարունակեն մանկական սննդի եւ հարակից ապրանքների ֆիրմային անվանումներ, ապրանքային նշաններ կամ արտադրողի եւ (կամ) բաշխողի անվանումը, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղեկատվությունը տրամադրվում է բուժաշատողներին:

3. Մանկական սննդով կերակրելու մասին գրավոր, ձայնային կամ տեսողական տեղեկատվական եւ ուսուցողական նյութերը, բացի սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունից, պետք է ընդգրկեն նաեւ հետեւյալ տեղեկատվությունը.

1) հրահանգներ՝ մանկական սննդի պատշաճ պատրաստման եւ օգտագործման, ինչպես նաեւ հարակից ապրանքների լվացման եւ ախտահանման վերաբերյալ.

2) մանկանը կերակրման բաժակով կերակրելու վերաբերյալ.

3) շշուկ կերակրման եւ մանկական սննդի ոչ նիշտ պատրաստման հետ կապված հնարավոր առողջական վտանգները:

4. Կրծքով կերակրումը խրախուսելու ազգային ծրագրով նախատեսված մանկական սնուցման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների մասին տեղեկատվական եւ ուսուցողական նյութերը հրապարակվում են՝

1) լիազոր մարմնի կողմից լիազորված կազմակերպությունների միջոցով սվյալ տարվա պետական նպատակային ծրագրերի շրջանակներում, ինչպես նաեւ տեղական եւ միջազգային ոչ կառավարական գործընկեր կազմակերպությունների միջոցների հաշվին.

2) այլ կազմակերպությունների կողմից՝ նյութերը լիազոր մարմնի հետ նախապես համաձայնեցնելուց հետո:

Լիազորման եւ նյութերի համաձայնեցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Լիազոր մարմինն իրավունք ունի արգելելու սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող մանկական սնուցման, մանկական սննդի եւ հարակից ապրանքների մասին տեղեկատվական եւ ուսուցողական նյութերի հրապարակումը եւ տարածումը:

## ԳԼՈՒԽ IX

### ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոդված 21. Պատասխանատվությունը սույն օրենքի պահանջները խախտելու համար

1. Սույն Օրենքի պահանջների խախտումն առաջացնում է Հայաստանի Հանրապետության Օրենսդրվ Սահմանված պատասխանատվություն:

## ԳԼՈՒԽ X

### ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

Հոդված 22. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող իննսուներորդ օրը, բացառությամբ 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի եւ 15-րդ հոդվածի 1-ին մասի, որոնք ուժի մեջ են մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

12.12.2014

ՀՕ-177